

Տ. ԱՂԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԼԻՈԶՅԱՆ

Աղան եպիսկոպոսը, ավազանի անունով՝ Եղիա, ծնվել է Հալեպում 1946 թվականի օգոստոսի 18-ին և այնտեղ էլ ստացել իր նախնական կրթությունը:

1961 թվականին ընդունվել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան և 1968 թվականին ավարտել ընծայարանի բաժինը:

1966 թվականի մայիսին սարկավագ և 1968 թվականի հուլիսին աբեղա է ձեռնադրվել՝ Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոսից:

1971 թվականի նոյեմբերին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ստացել է վարդապետական աստիճան՝ լուսարարապետ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսից:

1968—1971 թվականներին վարել է ընծայարանի փոխտեսչի և քարտուղարի պաշտոնները՝ դասավանդելով միաժամանակ գրաբար լեզու, աշխարհագրություն:

Իր աթոռանվեր ու խղճամիտ ծառայությունների համար 1972-ին Տ. Եղիշե Պատրիարքից իրավունք է ստացել կրելու վարդապետական լանջախաչ և ծաղկյա փիլոն:

1970—1971 թվականներին միաժամանակ վարել է Կյուլպենկյան մատենադարանի տեսչի պաշտոնը:

Վեհափառ Հայրապետի միջնորդությամբ 1971 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարան, որտեղ և մինչև 1974 թվականը հետևել է հայոց լեզվի և հայ գրականության դասընթացներին՝ որպես ազատ ունկնդիր:

Նույն տարիներին Էջմիածնի հոգևոր ճեմարանում դասավանդել է մեկնություն Հին և Նոր Կտակարանների, ծիսագիտություն, Վարք Սրբոց և քրիստոնեական առարկաներ:

Վերադառնալով Ս. Աթոռ՝ Երուսաղեմ, 1974—1975 թվականներին պաշտոնավարել է որպես տեսուչ Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի ու դասավանդել աստվածաբանություն, գրաբար լեզու և ծիսագիտություն:

1975 թվականի նոյեմբերից, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Տ. Եղիշե Սրբազան Պատրիարքի արտոնությամբ ու Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց առաջնորդ Տ. Գարեգին եպիսկոպոսի հրավերով, պաշտոնավարում է որպես առաջնորդական փոխանորդ նույն թեմում:

Տ. Աղան եպիսկոպոսն աշխատակցել է Ս. Աթոռի պաշտոնաթերթ «Սիոն» ամսագրին կրոնա-քարոզչական բնույթի հոդվածներով և ինքն էլ պատրաստել 1866—1877 ու 1927—1971 տարիների «Սիոն» ամսագրի նյութերի համառոտ մատենագիտությունը: Այժմ նա աշխատում է Պողոս վարդապետ Տարոնեցու կյանքի և մատենագրական վաստակի վրա:

1976 թվականի հունիսին Սիդնեյում ծայրագույն վարդապետական աստիճան է ընտանում՝ ձեռամբ առաջնորդ Տ. Գարեգին եպիսկոպոս Գազանճյանի:

1981 թվականի նոյեմբերին Վեհափառ Հայրապետի կոնդակով նշանակվում է Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ:

1982 թվականի փետրվարի 14-ին Մայր տաճարում եպիսկոպոս է ձեռնադրվել որպես վերոհիշյալ թեմի առաջնորդ: